12/12/2019 թ
Ժամը 12:00 թիվ՝ 2

<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

Արձանագրություն

ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

գնահատող հանձնաժողովի նախագահ
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան
հանձնաժողովիանդամներ
/դեղագետ/ Մ. Թովմասյան
/դեղագործ/ Ս. Անանյան
/հաշվապահ/ Ն. Դավթյան
/օպերատոր/ Օ. Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝
/գնումների համակարգող/ Արմեն Խաչատրյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

Հայտերի բացման նիստի մասին

Հանձնաժողովի նախագահ Ն. Գասպարյան

1" Հրավերի պահանջների նկատմամբ մասնակիցների ներկայացարծ ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանության մասին.

1.1 Արֆարմացիա ՓԲԸ-ի, Թեոֆարմա Իմպորտ ՍՊԸ, Լիկվոր ՓԲԸ, Ռիխտեր-Լամբրոն ՀՁ ՍՊԸ և Ֆարմ Թրաստ ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերի պահանջներին,

իսկ Վագա ֆարմ ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքների ամբողջական նկարագրերը չեն համապատասխանում գնման ընթացակարգի հրավերի պահանջներին, մասնավորապես՝

2 Վագա ֆարմ ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքների ամբողջական նկարագրերում բոլոր չափաբաժինների համար ներկայացրած տեխնիկական բնութագրում բացակայում է գնման ընթացակարգի հրավերով պահանջվող տվյալ դեղերի (գնման առարկաների) տեղափոխման և պիտանիության ժամկետի մասին պայմանները:

Մասնավորապես, գնման ընթացակարգի հրավերին կից պայմանագրի տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույցի համաձայն, նշված դեղերի տեխնիկական բնութագրերով պահանջվում է.

որպեսզի տվյալ դեղերը գնորդին հանձնելու պահին ունենան հետևյալ պիտանիության ժամկետը՝ եթե դեղը ունի 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ, ապա այն հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ իսկ մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

իսկ տեղափոխման պայմանները լինեն հետևյալը՝ եթե դեղը պահանջում է պահպանման և տեղափոխման հատուկ ջերմային, խոնավության ռեժիմներ կամ պայմաններ՝ ապա այդ պայմանները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Դեղերի փոխադրման, պահեստավորման և պահպանման կարգը սահմանելու մասին» N 17-Ն հրամանի պահանջներին:

2.1 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով և հրավերի 8.9-րդ կետով որոշեց՝ կասեցնել գնահատող հանձնաժողովի սույն նիստը և ծանուցել՝ Վագա ֆարմ ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացրած տեխնիկական բնութագրերում հրավերի նկատմամբ առկա անհամապատասխանությունները:

Հաձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Վագա ֆարմ ՍՊԸ-ին, վերը նշված ծանուցումը ուղարկելու օրվան հաջորդող 2-րդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ին:

Ընդունել որոշում կողմ **5** ***(հինգ),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

Գնահատող հանձնաժողովի նախագահ
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան

հանձնաժողովի անդամներ
/դեղագետ/ Մ. Թովմասյան

/հաշվապահ/ Ն. Դավթյան

/դեղագործ/ Ս. Անանյան

/օպերատոր/ Օ.Մանուկյան

Հանձնաժողովի քարտուղար
/գնումների համակարգող/ Ա.Խաչատրյան